Ավետիք Իսահակյան

Է՞յ, ջան – հայրենիք, ինչքա՞ն սիրուն ես,

Է՞յ, ջան – հայրենիք, ինչքա՞ն սիրուն ես,
Սարերրդ կորած երկնի մովի մեջ.
Ջրերրդ անո՛ւշ, հովերրդ անո՛ւշ,
Մենակ բալեքրդ արուն – ծովի մեջ:

Քու հողին մեռնեմ, անգի՛ն հայրենիք,
Ա՞խ, քիչ է, թե որ մի կյանքով մեռնեմ,
Երնեկ ունենամ հազար ու մի կյանք,
Հազա՛րն էլ սրրտանց քեզ մատաղ անեմ:

Ու հազար կյանքով քու դարդին մեռնեմ,
Բալեքիդ մատա՛ղ, մատա՛ղ քու սիրուն.
Մենակ մի կյանքը թո՛ղ ինձի պահեմ, -
Է՛ն էլ քու փառքի գովքը երգելուն, -

- Որ արտուտի պես վե՞ր ու վե՞ր ճախրեմ
Նոր օրվա ծեգիդ, ազի՛զ հայրենիք,
Ու անո՛ւշ երգեմ, բա՛րձր ու զիլ գովեմ
Կանաչ արևրդ, ազա՛տ հայրենիք …

1900
Ժրնև